ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
կոլեգիայի 2014 թվականի հուլիսի 30-ի նիստի

ք.Երևան 30 հուլիսի 2014թ.
ժ. 17.30– 19:00

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանը

Մասնակցում էին՝

Կոլեգիայի անդամներ

Խոսրով Հարությունյան	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, Հայաստանի Հանրապետության հանրային խորհրդի անդամ
Գրիշա Բաղիյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ
Սամվել Գալստյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Գառնիկ Պետրոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Ռոբերտ Մակարյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Արմեն Հարությունյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Արտաշես Կիրակոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավար
Ռոզա Ծառուկյան	«Ֆերմերների ազգային միավորմում» /ՖԱՄ/ ՀԿ-ի նախագահ
Գագիկ Սարդարյան	«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն հիմնադրամի» տնօրեն
Հակոբ Անդրեասյան	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր գործադիր տնօրեն
Երվանդ Թարվերդյան	«Հայաստանի պահածոյագործների և հյութ արտադրողների միություն» իրավաբանական անձանց միության նախագահ
Ավագ Հարությունյան	«Հայ գինեգործների միություն>> իրավաբանական անձանց միության նախագահ
Վ. Ուռուտյան	<<Ագրոբիզնեսի կրթության և հետազոտու-թյունների միջազգային կենտրոնի» տնօրեն
Ա. Ղազարյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների /գործատուների/ միության» նախագահ
Վ. Համբարձումյան	«Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիայի» նախագահ

Հրավիրված էին՝

Ա.Պետրոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի խորհրդական
Վ.Ղուշչյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության պետ
Հ.Ծպնեցյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրավորման վարչության պետ
Ա.Հովհաննիսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության պետ
Գ. Հարությունյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ
Ա. Պետրոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ
Ա. Ավետիսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
Կ. Ավետիսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ
Ա.Շիրվանյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի սննդամթերքի անվտանգության բաժնի պետ
Ա. Պետրոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անտառային տնտեսության բաժնի պետ
Գ.Ղամարյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի առաջին բաժնի պետ
Դ. Սիմոնյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ
Մ. Խաչատրյան	Գյուղատնտեսական կոոպերացիայի աջակցության բաժնի պետ
Բ. Կղմեսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության անասնաբուծության բաժնի պետ
Տ. Ալեքսանյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության ձկնաբուծության և մեղվաբուծության բաժնի պետ

Գ. Վարդանյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության անասնաբուժության բաժնի պետ
Ե. Խաչատրյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության բաժնի առաջատար մասնագետ
Թ. Ստեփանյան	ՀՀ ԳՆ «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն
Վ. Բարսեղյան	ՀՀ ԳՆ «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Գ. Բաղիյան, Ա. Հարությունյան, Գ. Սարդարյան, Ե. Թարվերդյան, Խ. Հարությունյան, Ս. Կարապետյան)

Զեկույցում նշեց, որ 2014 թվականի առաջին կիսամյակում գյուղատնտեսության ոլորտում իրականացվող քաղաքականությունը հիմնականում նպատակաուղղվել է առկա ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակի բարձրացմանը, ոլորտի տնտեսավարողների համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, իրացման խնդրի մեղմմանը և առաջնահերթ այլ խնդիրների լուծմանը: Ըստ պաշտոնական վիճակագրության տվյալների՝ գյուղատնտեսությունում ընթացիկ տարվա վեց ամիսներին, չնայած բնական աղետների պատճառած վնասների, ընդհանուր ոլորտում առկա են դրական տեղաշարժեր: 2014 թվականի հունվար-մայիս ամիսներին գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է՝ 160.8 մլրդ դրամ, որը 5.4 %-ով գերազանցում է նախորդ տարվա մակարդակը, ընդ որում բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերում աճը համապատասխանաբար կազմել է 8.3 և 4.7 %: Ընթացիկ տարում բարձրացել է վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, ըստ օպերատիվ տվյալների ցանքատարածությունները գերազանցել են նախորդ տարվա մակարդակը շուրջ 15.0 հազ. հեկտարով: Հաշվետու ժամանակահատվածում ոլորտում իրականացվել են մի շարք պետական ծրագրեր, մասնավորապես .

1. **<<ՀՀ 2010-2014թթ. ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման>>** ծրագիրը, որի շրջանակներում 2014 թվականի բերքի համար 2013 թվականին աշնանացանի ցանքեր իրականացնելու նպատակով ՌԴ-ից ներկրվել է աշնանացան ցորենի 440 տոննա էլիտային վերարտադրության սերմացու, ինչպես նաև ծրագրով նախատեսված պայմաններով շահառուներից հետ է վերադարձվել և գնվել է 3809 տոննա առաջին վերարտադրության աշնանացան ցորենի սերմացու: Բավարարվել է մարզերից ստացված հայտերում ներկայացված առաջին վերարտադրության աշնանացան ցորենի ամբողջ պահանջարկը: Ծրագրի իրականացումը հնարավորություն է ընձեռել ընթացիկ տարվա բերքի համար աշնանացանի տարածքները հասցնել 96.1 հազ. հեկտարի, նախորդ տարվա 90.3 հազ. հեկտարի դիմաց:

2. **<<ՀՀ 2014 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման>> ծրագիրը**, որի շրջանակներում ՌԴ-ից

հանրապետություն է ներկրվել 1906.3 տոննա գարնանացան գարու առաջին վերարտադրության, 168.35 տոննա՝ կապույտ առվույտի, 169.96 տոննա՝ կորնգանի և 23.44 տոննա՝ եգիպտացորենի սերմացու, իսկ տեղական սերմարտադրողից գնվել է 150 տոննա գարնանացան գարու էլիտային վերարտադրության սերմացու: Ծրագրի իրականացմանն է ուղղվել 1 միլիարդ 218 միլիոն դրամ:

Սերմացուի 1 կիլոգրամը հողօգտագործողներին հատկացվում է պետության կողմից ձեռք բերված արժեքից 35-50 % ցածր գնով: Ծրագրի իրականացման ընթացքում ՀՀ մարզերում վճարունակ պահանջարկի բացակայության պատճառով իրացվել է ներկրված սերմացուի շուրջ 39 %-ը: Մնացած սերմացուն հողօգտագործողներին իրացվելու է 2015 թվականի գարնանը:

3. **<<Հողօգտագործողներին 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության>>** ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվել է ներկրել 33822 տոննա ազոտական, 2645 տոննա ֆոսֆորական և 1619 տոննա կալիումական պարար-տանյութեր և հանրապետությունում առկա 700.6 տոննա ազոտական պարարտանյութի հետ միասին շուկայականից էականորեն ցածր գներով հատկացնել հանրապետության հողօգտագործողներին: Ընդ որում, ֆոսֆորական և կալիումականն պարարտանյութերը վերջին տարիներին ներկրվում են առաջին անգամ:

4. <<Հողօգտագործողներին 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության>> ծրագիրը, որի շրջանակներում հանրապետության հողօգտագործողներին գյուղական համայնքներում տրամադրվելու է 17 միլիոն 640 հազար լիտր դիզելային վառելանյութ, 1 լիտրը 350 դրամ՝ շուկայականից 25-26 %-ով ցածր գնով, ներառյալ տեղափոխման ծախսերը: Ծրագրի իրականացմանն է ուղղվել 1 միլիարդ 260 միլիոն դրամ սուբսիդիա: Հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի երաշխավորված բերքի ապահովման և կայուն բուսասանիտարական վիճակի ստեղծման նպատակով իրականացվել է <<Բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագիրը>>, որը բաղկացած է մի քանի բաղադրիչից: Աշխատանքներ են տարվել **կարտոֆիլի ցեց և լոլիկի ականող ցեց** վնասատուների դեմ պայքարի ուղղությամբ: Ձեռք են բերվել 2500 հատ լոլիկի ականող ցեցի և 400 հատ կարտոֆիլի ցեցի ֆերոմոնային թակարդներ և օժանդակ նյութեր:

Գյուղատնտեսական մշակաբույսերի երաշխավորված բերքի ստացման համար կարևոր է համարվում **<<Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման ծրագիրը>>,** որի շրջանակներում 2014 թվականի առաջին կիսամյակում ստուգվել է գյուղատնտեսական մշակաբույսերի 6035,0 տոննա տարբեր մշակաբույսերի սերմեր:

Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագիրի շրջանակներում 2014 թվականի համար նախատեսվել է հետազոտել 171 համայնքի շուրջ 92.0 հազ. հա հողատարածք, որից առաջին կիսամյակում հետազոտվել է 50 համայնքի 29358 հեկտար հողեր: Փորձաքննության արդյունքների հիման վրա կազմվել է 40 համայնքի ագրոքիմիական քարտեզներ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրեր, իսկ 10 համայնքի ագրոքիմիական քարտեզները նախապատրաստման գործընթացում են: Մշակվում է պարարտանյութերի խնայողաբար և արդյունավետ օգտագործման վերաբերյալ գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ, որոնք տրամադրվում են համա-պատասխան համայնքներին: **2014 թվականի առաջին կիսամյակում միջոցառումներ են ձեռնարկվել բնական աղետների հետևանքների մեղմման ուղղությամբ:** 2014 թվականի ապրիլի 1-ից մայիսի 30-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Վայոց Ձորի, Տավուշի և Լոռու մարզերում տեղի ունեցած ցրտահարության հետևանքով առավել տուժած հողօգտագործողներին հատկացվել են 85 մլն դրամ արժեքով լոլիկի՝ 292,2 կգ, վարունգի՝ 566,5 կգ, ձմերուկի՝ 1117,1 կգ և սեխի՝ 190,5 կգ սերմացուներ, որով հնարավոր է ցանք կատարել 3335,1 հա տարածության վրա: 2014 թվականի մայիսի 24-ին տեղացած կարկուտի հետևանքով ՀՀ Լոռու մարզի 11 համայնքների հողօգտագործողներին օգնություն ցուցաբերելու նպատակով հատկացվել է 95,25 տոննա ազոտական պարարտանյութ և 7620 լիտր դիզելային

վառելանյութ, որոնց արժեքը (շուրջ 14 մլն դրամ) կվճարվի մարզպետարանի կողմից՝ հրատապ խնդիրների լուծման համար ՀՀ պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցներից:

2014 թվականի առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ արձանագրվել է բարձր ցուցանիշներ թե անասնագլխաքանակի և թե անասնաբուծական մթերքների արտադրության և իրացման ծավալների ավելացման առումով:

Ըստ օպերատիվ տվյալների, ընթացիկ տարվա առաջին կիսամյակի ընթացքում հանրապետությունում տավարի գլխաքանակն ավելացել է 2.5 %-ով և կազմել է 694.5 հազ. գլուխ, ոչխարների և այծերի գլխաքանակն ավելացել է 5.0 % և կազմել է 753.8 հազ. գլուխ, թռչունների գլխաքանակն ավելացել է 2.2 % և կազմել է 5 մլն գլուխ, բացառությամբ խոզերի գլխաքանակից, որը նվազել է 1.5 %-ով: 2014 թվականի առաջին կիսամյակում արձանագրվել է կենդանական ծագման մթերքների արտադրության ծավալի զգալի աճ: Այսպես, 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հանրապետությունում արտադրվել է շուրջ 36 հազ. տոննա միս, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է գրեթե 10 %-ով: Կաթի արտադրությունը կազմել է 402 հազ. տոննա, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 7 %-ով, իսկ ձվի արտադրությունը կազմել է 370 մլն, որը նախորդ տարվա ցուցանիշից ավել է 5.5 %-ով: 2014 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում ապրանքային ձկան արտադրությունը կազմել է 7800 տոննա, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է շուրջ 30 %-ով, իսկ ձկան արտահանման ծավալը կազմել է 1140 տոննա, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ ավելի է 250 տոննայով կամ 28 %-ով: Արարատյան հարթավայրի ձկնաբուծարանների կողմից օգտագործվող արտեզյան ջրերի արդյունավետ օգտագործման համար ջրի խնայողության կիսափակ և փակ ջրամատակարարման համակարգերի ներդրման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը մշակել է մի շարք իրավական փաստաթղթերի նախագծեր: Անասնապահության զարգացման համար առանձնակի կարևորվում է նաև <<**Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> ծրագրի իրականացումը:** Անասնապահության ճյուղի կայունության և ազգաբնակչությանն առողջության համար անվտանգ անասնապահական ծագման մթերքներով ապահովման գործում կարևորվում է **<<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>>** ծրագիրը, որի շրջանակներում անասնահակահամաճարակային միջոցառումների իրականացման համար ձեռք են բերվել ընդհանուր առմամբ 8.7 մլն դոզա բուժկանխարգելիչ միջոցներ: Համայնքային անասնաբույժ-մասնագետների կողմից իրականացվել են անասնահակահամաճարակային միջոցառումներ խոշոր եղջերավոր կենդանիների բրյուցելոզ, տուբերկուլյոզ, սիբիրախտ, պաստերելյոզ, դաբաղ, էմկար հիվանդությունների նկատմամբ՝ 2.97 մլն, մանր եղջերավոր կենդանիների բրուցելյոզ, դաբաղ, սիբիրախտ, բրադզոտ հիվանդությունների նկատմամբ՝ 1.72 մլն, խոզերի դասական ժանտախտ հիվանդության նկատմամբ՝ 332.3 հազ., թռչունների կեղծ ժանտախտ հիվանդության նկատմամբ՝ 1.03 մլն միջոցառումներ և մեղուների վարրուատոզ հիվանդության նկատմամբ՝ 223.2 հազ. բուժկանխարգելիչ միջոցառումներ:

Գյուղատնտեսության ոլորտի առջև ծառացած խնդիրերի լուծման կարևորագույն գործիքներից է **<<Գյուղատնտեսությունում տնտեսավարողների վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի>>** իրականացումը:

Նախարարության կողմից մշակվել է Հայաստանի Հանրապետությունում հացահատիկահավաք կոմբայնների ներկրման և շահագործման հայեցակարգային մոտեցումները և ներկայացվել է ՀՀ կառավարություն: 2013-2014 թվականներին հանրապետություն է ներկրվել և ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցով ուղղակի վաճառքի ու լիզինգային եղանակով շուկայականից անհամեմատ ցածր գներով տնտեսավարող սուբյեկտներին և անհատներին է տրամադրվել <<ՄՏՁ 82.1>> մակնիշի 220 տրակտոր և 130 միավոր գյուղատնտեսական տեխնիկա: ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի միջոցով 2012-2013 թվականներին հանրապետություն է ներկրվել և համայնքային արոտօգտագործողների

միավորումներին ու գյուղատնտեսական աջակցության կենտրոններին է հատկացվել շուրջ 367 միավոր տրակտոր և գյուղատնտեսական տեխնիկա:

Անտառաբուծության ոլորտում մի շարք գործառույթների հստակեցման նպատակով նախարարության կողմից մշակվել է <<Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության մի շարք որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծեր: <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի եկամուտների հաշվին 2014 թվականի առաջին կիսամյակում հիմնադրվել է 0.5 հա տարածքով տնկարան, շուրջ 41 հա-ի վրա իրականացվել է նախկինում հիմնված անտառմշակույթների լրացում, իսկ 10.5 հա-ի վրա՝ խնամք: ՀՀ կառավարության 2014 թվականի հունիսի 12-ի N598-Ն որոշմամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը հատկացվել է 61,9 մլն.դրամ 66 հա անտառապատման աշխատանքներ իրականացնելու համար:

Առաջընթաց է արձանագրվել նաև մեղվաբուծության ոլորտում: Վերջին 4 տարիների ընթացքում մեղվաընտանիքների թիվը գրեթե կրկնապատկվել է և դրանում իր ավանդն ունի «Մուլտի Ագրո» գիտաարտադրական միավորումը, որը նաև իրականացնում է գիտահետազոտական աշխատանքներ մեղվաբուծության ոլորտում, իսկ Մեղրիի փորձարարական բազայում հայկական դեղին մեղվի գենոֆոնդի պահպանմամբ:

Իրականացված աշխատանքների հետ մեկտեղ ոլորտի առջև դեռևս ծառացած են բազմաթիվ խնդիրներ, մասնավորապես՝ սկսված ծրագրերի շարունակականության ապահովումը, բերքահավաքի մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի գործընթացին, գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ընկերությունների կողմից մթերումների նախապատրաստմանը, այդ բնագավառում պայմանագրային հարաբերությունների ընդլայնմանը աջակցությունը և մթերումների գործընթացի սահուն կազմակերպումը, գյուղատնտեսությունում օգտագործվող առաջնահերթ ռեսուրսների (հանքային պարարտանյութերի տարբեր տեսակներ և դիզելային վառելանյութ) մատչելիության բարձրացման աջակցության ծրագրերի ընթացքի ապահովումը և տարվա կտրվածքով նախատեսված մատակարարումների ծավալների ապահովումը, անասնաբուծության տոհմային գործի կազմակերպումը, մասնավորապես գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավումը, արհեստական սերմնավորման գործ-ընթացում արդյունավետ մեխանիզմների և տեխնոլոգիաների ներդրումը:

Կարևոր խնդիր է նաև մարդկանց և կենդանիների համար վտանգավոր համարվող հիվան-դությունների դեմ հակահամաճարակային միջոցառումների շարունակականության ապա-հովումը և նախատեսված կանխարգելիչ ու ախտորոշիչ միջոցառումների իրականացման մեխանիզմների կատարելագործումը: Գյուղատնտեսության առջև ծառայած խնդիրների լուծման առումով կարևորվում է վարկերի մատչելիության բարձրացման ծրագրերի շարունակականությունը, մասնավորապես՝ վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի երկրորդ փուլի իրականացումը՝ ընդլայնված ծավալներով և կատարելագործված մեխանիզմներով: Առաջնահերթ խնդիրներից է տնտեսավարման ձևերի կատարելագործումը, մասնավորապես գյուղատնտեսությունում կոոպերացիայի, տնտեսավարողների համատեղ գործունեությունը խթանելու մեխանիզմների ներդրման միջոցով արտադրության արդյունա-վետության բարձրացումը: Անասնապահության ճյուղի զարգացման, բնական կերահանդակների արդյունավետ օգտագործման, տնտեսավարման կոոպերատիվ ձևի առավելությունների օգտագործման առումով կարևորվում է <<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> ծրագրի շարունակումը և ծրագրի երկրորդ փուլի նախապատրաստումը: Առաջնահերթ խնդիր է նաև գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման համար նախադրյալների ստեղծումը և աստիճանական քայլերի ձեռնարկումը: Կարևորվում է գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության, մասնավորապես մատչելի պայման-ներով գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման աշխատանքների կազմակերպումը:

Որոշվեց՝

1.Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի կազմակերպակառուցվածքային համակարգում կատարել փոփոխություններ:

2. Միջոցներ ձեռնարկել գյուղատնտեսական խորհրդատվական համակարգի կատարելագործման ուղղությամբ:

3.«Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններ» ՓԲԸ-ների միջոցով գյուղացիական տնտեսություններին պարզաբանել ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի օգտագործման արդյունավետությունը:

4. Պարբերաբար զանգվածային լրատվության միջոցներով հանրությանը ներկայացնել ՀՀ գյուղատնտեության նախարարության կողմից իրականացվող ծրագրերի վերլուծականները և դրանց արդյունքները:

5.Վերանայել <Գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման> ռազմավարությունը:

6.Գյուղատնտեսության զարգացման ծրագրերում ընդգրկելու համար գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող խնդիրները ուսումնասիրելու և առաջնահերթությունների հիման վրա գյուղատնտեսության զարգացմանն ուղղված առաջարկություններ մշակելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ:

2.ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՍՆԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՎ <<ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Ա.Հովհաննիսյան, Ռ. Ծառուկյան, Գ. Սարդարյան, Գ. Բաղիյան, Ս. Կարապետյան)

Զեկույցում նշվեց, որ Հայաստանի Հանրապետությունում կայուն անասնաճարակային իրավիճակը պահպանելու նպատակով 2014 թվականի առաջին կիսամյակում «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում իրականացվել են ախտորոշիչ, կանխարգելիչ և ախտահանիչ միջոցառումներ: «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում ընդգրկված միջոցառումների իրականացման համար ՀՀ պետական բյուջեից նախատեսվել է 594,0 մլն դրամ, որից օգտագործվել է 576,2 մլն դրամ: 576,2 մլն դրամից 16,4 մլն դրամն ուղղվել է ախտորոշիչ, 11,6 մլն դրամը՝ ախտահանիչ միջոցների, իսկ 548,2 մլն դրամը՝ պատվաստանյութերի ձեռքբերմանը: Ընդ որում, պատվաստանյութերի ձեռքբերման գումարի 82%-ը, կամ 448,7 մլն դրամն օգտագործվել է ավելի քան 2 մլն չափաքանակ (դոզա) դաբաղի պատվաստանյութի ձեռքբերման համար: 2014 թվականին իրականացվող հակաանասնահամաճարակային միջոցառումների համար ձեռք է բերվել 1 մլն 267 հազար չափաքանակ ախտորոշիչ միջոցներ («Ռոզ Բենգալ» և «Տուբերկուլին» ախտորոշիչներ), 7 մլն 397 հազար չափաքանակ պատվաստանյութեր և 3000 կգ ախտահանիչ նյութեր (կաուստիկ սոդա, ֆորմալին և քլորակիր):

2014 թվականի առաջին կիսամյակում «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում, ընդհանուր առմամբ իրականացվել են 6 մլն 25 հազար ախտորոշումներ և պատվաստումներ, որից 755575 ախտորոշում՝ տավարի

բրուցելոզ և տուբերկուլյոզ, ինչպես նաև մանր եղջերավոր կենդանիների բրուցելոզ հիվանդությունների նկատմամբ, իսկ 5 մլն 270 հազարը՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների, խոզերի և թռչունների 7 հիվանդությունների նկատմամբ: «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում իրականացված ախտորոշումների և պատվաստումների շուրջ 17%-ը (1015439) իրականացվել է Գեղարքունիքի մարզում, 14,4%-ը՝ Շիրակի մարզում, 11,8%-ը՝ ՀՀ Արմավիրի մարզում, 11,5%-ը՝ Արագածոտնի մարզում, իսկ մյուս մարզերում՝ 3,3-9,5%-ը: Խոշոր եղջերավոր կենդանիների շրջանում բրուցելոզ հիվանդության ամենաբարձր ցուցանիշները արձանագրվել են Կոտայքի (1453 գլուխ կամ նմուշառված կենդանիների 4,5 %-ը), ՀՀ Արմավիրի (374 գլուխ կամ 1,5 %-ը), Արագածոտնի (482 գլուխ կամ 1,0%) և ՀՀ Վայոց Ձորի (121 գլուխ կամ 1,0%-ը) մարզերում մինչդեռ մյուս մարզերում հիվանդ կենդանիների տեսակարար կշիռը կազմել է 1%-ից ցածր, իսկ ՀՀ Տավուշի մարզում բրուցելոզով հիվանդ կենդանի չի հայտնաբերվել: 2014 թվականի հուլիսի 10-ի դրությամբ բրուցելոզով հիվանդ բոլոր մանր եղջերավոր կենդանիներն ենթարկվել են սանիտարական սպանդի, իսկ 3074 խոշոր եղջերավոր կենդանիներից սպանդի են ենթարկվել 3068 գլուխը: Բրուցելոզ հիվանդության տարածվածության վերաբերյալ կատարված վերլուծությունները ցույց են տվել, որ թեև հիվանդ կենդանիների տեսակարար կշիռը մոտ է նախորդ տարիների միջին ցուցանիշներին, այնուամենայնիվ մտահոգիչ է ՀՀ Կոտայքի մարզում տիրող իրավիճակը, քանի որ հանրապետությունում հայտնաբերված հիվանդ կենդանիների ավելի քան մեկ երրորդը կենտրոնացված է այդ մարզում: Մարզի հիվանդ կենդանիների ավելի քան 70%-ը կենտրոնացված է Գեղաշեն համայնքում: ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքում ընթացիկ տարվա առաջին կիսամյակում նմուշառված 2074 խոշոր եղջերավոր կենդանիներից 937 գլուխը կամ 45,2%-ը կազմել են հիվանդ կենդանիներ, որոնցից 931 գլուխն ենթարկվել է հարկադիր սպանդի: Անասնաճարակային իրավիճակը համայնքում կայուն է, իսկ առկա գլխաքանակից պարբերաբար իրականացվում է արյան նմուշառում և լաբորատոր փորձաքննություն: 2014 թվականի երկրորդ կիսամյակում սահմանված ժամանակացույցին համապատասխան, հանրապետության բոլոր մարզերում ընթանում են նախատեսված հակահամաճարակային միջոցառումները, որոնց համար անհրաժեշտ ախտորոշիչ, կանխարգելիչ և ախտահանիչ միջոցներն ձեռք են բերվել:

Որոշվեց՝

1.Միջոցներ ձեռնարկել պետության կողմից մատուցվող անասնաբուժական ծառայությունների որակը բարձրացնելու ուղղությամբ:
2. Միջոցներ ձեռնարկել անասնաբույժերի մասնագիտական որակավորման բարձրացման ուղղությամբ:
3.Աջակցություն ցուցաբերել հանրապետությունում մեղվաբուծության զարգացմանը:
4.Միջոցներ գտնել տարբեր հիվանդությունների դեմ մեղուների պատվաստանյութերի տրամադրման ծավալներն ավելացնելու ուղղությամբ:
5.Հանրապետությունում բրուցելոզ հիվանդությունն իսպառ վերցնելու նպատակով ուսումնասիրել զարգացած երկրների բրուցելոզ հիվանդության դեմ պայքարի փորձը և մշակել նմանօրինակ միջոցառումների ծրագիր՝նախատեսելով ֆինանսավորում դոնոր կազմակերպությունների կողմից:

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. ԲԱԴԱԼՅԱՆ